




«Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից Աջափնյակ վարչական շրջանի, Մարգարյան 6/2 հասցեում հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման /Բժշկական կենտրոնի մասնաշենքի ընդլայնման և վերակառուցման կցակառույց/

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԻՆՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

(Լրամշակված)



Ձեռնարկող՝ «Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ



Նախագծող՝ «Նովի» ՍՊԸ

(Signature)

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն	4
2. Հավելվածներ	4
3. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը	5
4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	8
5. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	9
6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը.....	9
7. Նախատեսվող գործունեության նպատակը.....	13
բնութագիրը և տեխնիկական- տեխնոլոգիական լուծումները.....	13
8. Շրջակա միջավայրի բնութագրերը.....	23
8.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը	23
8.2 Սեյսմիկա և երկրաբանություն	24
8.3 Կլիմա և օդային ավազա	25
8.4 Հողային ռեսուրսներ.....	31
8.5 Ջրային ռեսուրսներ.....	31
8.6 Կենսաբազմազանություն.....	33
8. 7 Պատմության և մշակութային հուշարձաններ.....	34
8.8 Բնության հուշարձաններ	36
8.9 Հատուկ պահպանվող տարածքներ	36
8. 10 Սոցիալ-տնտեսական	37
9. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը (բնապահպանական կառավարման պլան).....	39
9. 1 Օդային ավազան	40
9. 2 Հողային ռեսուրսներ.....	41
9. 3 Ջրային ռեսուրսներ.....	41
9. 4 Կենսաբազմազանություն	42
9. 5 Թափոններ.....	43
9. 6 Աղմուկ և թրթռում	44
9. 7 Արտակարգ իրավիճակներ	45
9. 8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	46
9. 9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	48
9. 10 Սոցիալական.....	48
9. 11 Բարեկարգում և կանաչապատում	49

10.	Մոնիթորինգ	49
11.	Բողոքների ընթացակարգ.....	50
12.	Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան.....	52
13.	Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	65
14.	Հանրային քննարկումներ	69
	Գրականություն	70

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	Հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման (Բժշկական կենտրոնի մասնաշենքի ընդլայնման և վերակառուցման կցակառույց) նախագծային փաստաթղթի
Ձեռնարկող	«Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Աջափնյակ, Մարգարյան 6/2
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Ք. Երևան Աջափնյակ, Մարգարյան 6/2
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	հեռ. 091223204 rirhpog@gmail.com
Պատվիրատու	«Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան
Աշխատանքային նախագծի մշակող	«Բաբայան-Լատ Նախագիծ» ՍՊԸ
Քնահատման հայտի նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հայտի մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Բոյունովի 6 (012)21-10-01, (093)39-77-60 noval-llc@outlook.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը, պետական ռեգիստրը

Հավելված 2. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը

Հավելված 3. Տարածքի գլխավոր հատակագիծը

Հավելված 4. Կադաստրի իրավիճակային քարտեզ սխեմա

Հավելված 5. Էլեկտրամատակարարման պայմանագիրը և տեխ.պայմանը

Հավելված 6. Ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագիրը

Հավելված 7. Գազամատակարարման պայմանագիրը

Հավելված 8. Համայնքապետարան նախնական համաձայնությունը

Հավելված 9. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ

Հավելված 10. Դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթեթը

3. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)– Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի՝ իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)–Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների

ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճաբանական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)–Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի

պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է զենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (2001թ.) - կարգավորում է ՀՀ Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց կիրառման մեխանիզմները:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում**՝ «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում**՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում**՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում**՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում**՝ «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:
- ❖ **ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում**՝ «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշում**՝ «ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՆՈՐՈԳՎՈՂ) ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ

ԷԼԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵՐԳԱՎՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ ԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

- ❖ ՀՀ կառավարության 16 հունվարի 2014 թվականի N 55-Ն որոշում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑԿՈՂ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ» :

4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն այս օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: Բաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են 1500մ²-ից ավել կառուցապատման մակերեսով քաղաքաշինական կառույցները: Հայտով ներկայացված գործունեությունը համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի՝ համարվում է թվարկված գործունեություն, ներառված է Գ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Գ կատեգորիայի ընթացակարգով: Գ կատեգորիայում ներառված նախատեսվող գործունեության տեսակների դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթակա նախնական գնահատման հայտը:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի՝ փորձաքննության ներկայացվող նախնական գնահատման հայտը պարունակում է.

- 1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը,
- 2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը,
- 3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման,
- 4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ),
- 5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը,
- 6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լուծումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա

հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Նախնական գնահատման հայտը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

5. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ Զ. Երևան Աջափնյակ, Մարգարյան 6/2:

Հասարակական շենքի և ավտոկայանատեղիի համար հատկացված տարածքը սահմանակից է «ՎԱՊՄԳՀԻ» ՓԲԸ-ի ծննդատան տարածքին և հանդիսանալու է դրա կցակառույցը:

Նախագծման հիմքը.

Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 6/2 հասցեում հանրապետական հիվանդանոցի հասարակական շենքի և ավտոկայանատեղիի նախնական գնահատման հայտի մշակման համար հիմք են հանդիսացել.

- նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը,
- «Շին-Տալգ փորձագետ» ՍՊԸ-ի կողմից տրված փորձաքննական եզրակացությունը Յ Գ-32/ՌԱ-22,
- անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականները՝ N20052017-01-0181. Հավելված 1
- Երևանի քաղաքապետարանի կողմից 15. 06. 2022թ. տրված N01/18-07/1-Դ-23345-514 ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը, Հավելված 2
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի բժշկական կենտրոնի տարածքում:

Նախատեսվող շինությունը մի կողմից հարակից է Հալաբյան փողոցին, մյուս կողմից տեղակայված են հանրապետական հիվանդանոցի, մասնավորապես ծննդատան մասնաշենքերը:

Համաձայն սեփականության իրավունքի գրանցման վկայականների՝

- հողատարածքի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Հողամասի չափերն են 1.14765հա:

Ըստ քաղաքապետարանի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, տարածքում առկա են հետևյալ գոյություն ունեցող շինությունները.

- 7225,7քառ.մ, 1805,9քառ.մ, 497,63 քառ.մ, 6793.2 քառ.մ մակերեսներով բժշկական կենտրոնի տարբեր մասնաճյուղեր,
- 6.6քառ.մ, 51,1 քառ.մ, 54.3 քառ.մ մակերեսներով օժանդակ շինություններ,
- 14.7 քառ.մ մակերեսով պահակատուն,
- 64 քառ.մ մակերեսով պարիսպ:

Գործունեության տարածքն ունի մեծ թեքություն, որի վրա նախատեսվում է կառուցել հասարակական նշանակության շինություն, երկհարկանի ավտոկայանատեղի (կցակառույց): Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի՝ Երևան քաղաքին, որտեղ գտնվում է ուսումնասիրվող տարածքը բնորոշ է շոգ և չոր ամառը: Օդի առավելագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է +41°C, իսկ բացարձակ նվազագույնը՝ -30°C: Տարվա տեղումների միջին քանակը կազմում է 210մմ:


Տարածքի ինժեներատեխնիկական ուսումնասիրության իրականացման անհրաժեշտություն չի առաջացել, քանի որ տարածքը հանդիսանում է հանրապետական հիվանդանոցի տարածք, որը նպաստավոր է եղել շինարարության իրականացման համար:

Գրունտներ. կառուցապատվող հատվածի հիմքերի տակ գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշներն են.

- Ըստ կրողունակության ժամանակավոր դիմադրության սահմանը- $RO = 2.0 կգ/սմ^2$
- ըստ սեյսմիկ հատկությունների –III կարգի գրունտներ
- խտությունը -մինչև $1,80գ/սմ^3$
- գրունտի սառեցման խորությունը- 70սմ

Սեյսմիկ իրավիճակ- Շինարարության համար նախատեսված տեղանքը գտնվում է սեյսմիկ II գոտում, որի համար առավելագույն արագացումը գետնի մակերևույթին՝ $A=0,4mg$:

Գծապատկեր 1
Իրադրության սխեմաներ



ՏՐԱՒՈՒՆ	Վ. ԲԱՐՄԱՆ	ՏՐԱՒՈՒՆ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ
1/06	Վ. ԲԱՐՄԱՆ	ՏՐԱՒՈՒՆ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ
				ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ
				ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ
				ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ
				ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ
				ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ	ՍՏՏՏ-ՍՏՏՏ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ

7. Նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը և տեխնիկական- տեխնոլոգիական լուծումները

Գործունեության նպատակը Հանրապետական Հիվանդանոցի տարածքում նոր հասարակական նշանակության վարչական շենքի, ներառյալ պահեստային մասնաշենք, և ավտոկայանատեղի կառուցումն է, ինչը կնպաստի բուժական անձնակազմի պայմանների բարելավմանը, և այցելուների համար առավել նպաստավոր սպասարկման կազմակերպմանը:

Գոյություն ունեցող բժշկական կենտրոնի հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 114765 հա, որի շրջանակներում նախատեսվում է կատարել կառուցապատում:

Կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- Կառուցապատման մակերեսը՝ հասարակական մասնաշենք՝ 1-ինը 807մ², հատակագծային մակերես ± 0.000 նիշում 275,709 մ²,
- պահեստային և հասարակական մասնաշենք 2-ը՝ 877մ², հատակագծային մակերես ± 0.000 նիշում 410.161 մ²,
- Ավտոկայանատեղի՝ 3555մ², հատակագծային մակերես ± 0.000 նիշում 1640.22 մ²,

Հասարակական մասնաշենքի և ավտոկայանատեղիի կառուցապատման մակերեսն՝ ըստ քաղաքաշինական մակերեսների կազմում է 5239քառ. մ, հատակագծային մակերեսը ± 0.000 նիշում կազմում է 2326,09 մ²:

Տարածքում գոյություն ունի մետաղական ցանկապատ և կաֆե սրճարան, որոնք պահպանվելու են մինչև շինարարության ավարտը, ելնելով շինարարության ընթացքում դրանց անհրաժեշտությունից, այնուհետև քանդվելու և տարածքից հեռացվելու են՝ ընդամենը 220մ³ ծավալով: Տարածքը ծառապատ է: Գործունեության իրականացման ընթացքում ծառեր չեն հատվելու, գոյություն ունեցող գազոնը՝ 384 մ² մակերեսով թարմացվելու և վերականգնվելու է:

Սույն նախագծով նախատեսվում է թվով երեք շինությունների կառուցում՝ վերգետնյա երկհարկանի ավտոկայանատեղի, հասարակական նշանակության և պահեստային մասնաշենքեր:

1. Երկհարկանի բացօթյա կայանատեղին իրենից ներկայացնում է երկհարկանի բացօթյա շինություն, որը հատակագծում ունի բարդ ուրվագիծ՝ 29.6x59.8 առանցքային չափերի: Ձախակողմյան և հետևի հատվածում ունի ելունային մասեր՝ համապատասխանաբար՝ 0,8 և 1,9 մ: Նախատեսվել է միաձուլյ է/բետոնե կոնստրուկցիաներով: Դեպի երկրորդ հարկ մեքենաների մոտեցումը ապահովում է մուտքի և ելքի համար նախատեսված թեքհարթակներով: Երկրորդ հարկի պարագծով նախատեսվում է 1,0 մ բարձրությամբ պարապետ, իսկ մեքենաների համար հարթակը բացօթյա է: Բոլոր արտաքին պատերի ստորգետնյա մասերում և հիմքերում նախատեսվել է ջրամեկուսացում:

Ավտոկայանատեղին նախատեսված է մինչև 150 մեքենաների տեղակայման համար:

2. Հասարակական նշանակության մասնաշենքը բաղկացած է թվով երկու առանձին մասնաշենքերից, որոնցից առաջինը նախատեսված է հողամասի եզրամասում, իսկ երկրորդը՝ պահեստային մասնաշենքի վրա՝ նրա վերգետնյա հատվածում:

Հասարակական նշանակության մասնաշենքը եռահարկ է՝ 7.6x29.15մ առանցքային չափերի:

Առաջինը մասնաշենքը եռահարկ է, միաձույլ ե/բետոնե հիմնակմախքով: Արտաքին պատերում նախատեսվում է երեսպատում 30մմ հաստությամբ սալիկներով (տրավերտին, բազալտ): Կիրառվելու է նաև բարձրորակ սվաղ: Տանիքը հարթ է: Առաջին հարկում նախատեսվել է հասարակական տարածքներ (դեղատուն, սննդի կետ): Երկրորդ և երրորդ հարկերում նախատեսվել են պացիենտների հարազատների գիշերակացի սենյակներ:

Երկրորդ մասնաշենքը նախատեսվել է պահեստային մասնաշենքի վրա՝ միաձույլ ե/բետոնե հիմնակմախքով: Այն երկհարկանի է, որտեղ առաջին հարկում նախատեսվել է ավտոկայանատեղիից դուրս եկող մեքենաների համար անցման ճանապարհ (դալան): Առաջին հարկում նախատեսված են սանհանգույցներ և աստիճանավանդակ, երկրորդ հարկում՝ աշխատասենյակներ, սանհանգույց: Մուտքային հանգույցներում իրականացված են թեքհարթակներ՝ ԲՍԽ-խմբերի համար:

3. Պահեստային մասնաշենքը կիսաստորգետնյա է, որի կոնստրուկցիաները նախատեսվել են միաձույլ ե/բետոնից, վերջիններիս մակերեսները ծառայելու են որպես պահեստներ:

Բոլոր արտաքին պատերի ստորգետնյա մասերում և հիմքերում նախատեսվել է ջրամեկուսացում: Վերը նշված բոլոր մասնաշենքերի տանիքների և տարածքների ջրահեռացումներն արտաքին են՝ կազմակերպված: Շինությունները իրականացվելու են երկաթբետոնե, մետաղական կյուրերով, քարերով և այլ բարձրորակ շինարարական կյուրերով:

Շինության արտաքին պատերը լինելու են տուֆաքարե շարվածքով՝ 40սմ հաստության: Պահեստային շինության աջակողյան հատվածում նախատեսվում է բետոնե հենապատ՝ 1.1մ բարձրության:

Շահագործման փուլում շենքը ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում Էներգախնայողության և Էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ Էներգախնայողության և Էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված Էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Տարածքում առկա է 384մ² մակերեսով կանաչապատ գոտի՝ ճեմուղիներով այգի: Տարածքն ապահովված է գիշերային լուսավորությամբ:

Շինարարության փուլ. նախքան շին. մոնտաժային աշխատանքների սկսելը կատարվելու են կազմակերպչական, տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ՝ ժամանակավոր կենցաղ- գրասենյակային տնակների տեղադրում:

Շինարարական աշխատանքները ներառում են.

- նախապատրաստական փուլի աշխատանքներ,
- հողային աշխատանքներ,
- հիմնային աշխատանքներ
- շենքի վերգետնյա մասի ե/բ կարկասի պատրաստում,
- արտաքին պատերի շարում,
- տանիքային ծածկի աշխատանքներ,
- հատակների ջրամեկուսացման շերտի տեղադրում, հատակների կառուցում,
- արտաքին և ներքին երեսպատման, հարդարման աշխատանքներ,
- արտաքին և ներքին կոմունիկացիոն աշխատանքներ,
- ներկարարական և պաստառապատման աշխատանքներ,
- տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների կատարման համար կազմակերպվելու է շինհրապարակ համաձայն՝ 2012թ. մարտի 16-ի ՀՀ Երևան քաղաքի ավագանու «ԶԱՂԱԶԱՇԻՆԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՈՐՄԵՐԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 405-Ն որոշման Հավելվածով սահմանված Կարգի պահանջներին համապատասխան:

Ինժեներական անձնակազմի, բանվորների, աշխատանքային գործիքների և սարքավորումների համար նախատեսվելու են ժամանակավոր վագոն տնակ և այլ օժանդակ կառույցներ: Շինհրապարակն ապահովվելու է էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պահանջների պայմանները:

Շին հրապարակի ժամանակավոր ջրամատակարարումը և էլեկտրամատակարարումն իրականացվելու է տարածքում գոյություն ունեցող համապատասխան կոմունիկացիոն համակարգերից: Շինհրապարակում նախատեսվելու է շին աղբի համար տարածք:

Ելնելով առկա պայմաններից, շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Հողային աշխատանքներ. կառուցապատման ժամանակ կատարվելու են մոտ 7000մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 4900մ³ ծավալի հողային զանգվածն օգտագործվելու է հետլիցքի և տարածքի հարթեցման համար:

Ավելացած հողային զանգվածը՝ 2100մ³ ծավալով կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված, օրենքով սահմանված վայր: Հողի մշակումը և հանումը կատարվելու են բուլդոզերով և ձեռքով:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

Արտադրական հրապարակ:

Շինարարական աշխատանքների իրականացման համար կազմակերպվելու է 1700

վ² մակերեսով արտադրական հրապարակ:


Արտադրական հրապարակում լինելու են.


- ավտոմեքենաների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- պահակատուն-1 հատ,
- շինարարական նյութերի բաց պահեստ- 2 հատ՝ շինանյութերի պահեստավորման նպատակով,
- գործիքների պահեստ՝ 1 հատ,
- հանդերձարան 1 հատ,
- (1.1x1.2x2.15 (h) մ) չափերի 1 շարժական սան հանգույց(բիոզուգարան)՝ վաճարանով,
- ավտոմեքենաների անիվների վաճման հարթակ՝ 4.2 x 5.5մ չափերի:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և լուսային ազդանշանային համակարգով:

Գծապակեր 3

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ





Շինհրապարակը սահմանափակված է մի կողմից հիվանդանոցի արտաքին ցանկապատով, մյուս կողմից դա հիվանդանոցի ներքևի խորքային մասն է, որը սահմանափակվում է 1. 5մ բարձրության և 5 մետր լայնությամբ ցանցապատ դարպասներ դռնակով:

Գործունեության վայր շինտեխնիկան և ավտոմեքենաները մոտենալու են գոյություն ունեցող ճանապարհով՝ Հալաբյան փողոցից:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրի պահանջարկն ապահովվելու է գոյություն ունեցող ջրագծից, իսկ կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու են տարածքում տեղադրվելու է բիոզուգարան:

Մինչև շինարարության սկսելը շինհրապարակում կատարվելու են կոմունիկացիաների տեղադրման, միացման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգվելու է:

Էլեկտրամատակարարում. շինհրապարակի լուսավորությունը կատարվելու է գոյություն ունեցող տրանսֆորմատորային ենթակայանից՝ ժամանակավոր էլեկտրամալուխների անցկացման միջոցով: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, լուսարձակներով՝ 4 հատ:

Հրդեհաշիջման համակարգ- շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Զաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

Շին. հրապարակում տեղադրվելու է 2 հրդեհաշիջման վահանակ՝ դարպասների մոտ, յուրաքանչյուրի վրա 3 հակահրդեհային կրակմարիչներով:

Տեղադրվելու է նաև 2 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի և աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Գազամատակարարում. շահագործման փուլում բժշկական կենտրոնի գազամատակարարումը կատարվելու է համաձայն «ՎԱՊՍԳ-ՅԻ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ

Ջերմամատակարարում և օդափոխություն. «ՎԱՊՍԳՀԻ» ՓԲԸ-ի ջերմամատակարարումը կատարվում է գոյություն ունեցող կաթսայատան միջոցով: Նոր շինության ջեռուցումը կատարվելու է նույն կաթսայատանից: Կաթսայատանը տեղակայված են երեք հատ կաթսաներ: Կաթսաները համալրված են ժամանակակից այրիչներով և այրման ռեժիմի ավտոմատ կարգավորիչներով, ինչպես նաև անվտանգությունն ապահովող անհրաժեշտ սարքավորումներով, վթարային անջատիչներով, ձայնային և լուսային ազդանշաններով: Կաթսայատունն աշխատում է բնական գազով, պահուստային վառելիք չի նախատեսվում: Գազի տարեկան միջին ծախսը կազմում է 40000մ³/տարի: Կաթսայատունն աշխատում է տարեկան 4380 ժամ: Գազի այրման ժամանակ առաջացած վնասակար կյուլերը՝ ածխածնի օքսիդը և ազոտի օքսիդները արտանետվում են 12մ բարձրության և 0,4մ տրամագծով ծխատար խողովակի միջոցով՝ մեկ արտանետման աղբյուրից: Կաթսայատան հզորության փոփոխություն չի նախատեսվում, քանի որ կաթսայատան հզորությունը կբավարարի նաև կառուցվող տարածքի ջերմատակարարումն ապահովելու համար, քանի որ ամբողջ հզորությամբ չի աշխատել: Նոր կառուցվող շինության համար նախատեսված են բնական օդափոխության, ներածման և արտածման համակարգեր:

Ջրամատակարարում- Համակարգը նախագծվել է հիմք ընդունելով ՀՀՇՆ 40-01. 01-2014 պայմաններն ու պահանջները: Ջրամատակարարման համակարգը միացվելու է գոյություն ունեցող հիվանդանոցի ներքին ցանցից: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսվել է պոլիէթիլենային d=20x2.0մմ, d=25x2.3մմ, d=32x3.0մմ և d=40x3.7մմ-անոց խողովակներից, որոնք սնուցում են հիմնականում խոհանոցի և սանհանգույցների սարքավորումները:

Շահագործման փուլում ջրամատակարարումը կատարվելու է ըստ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ միացվելու է ջրամատակարարման քաղաքային ցանցին՝ Հավելված 6:

Տաք ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող կաթսայատանից՝ տաք ջրամատակարարման միջոցով՝ խողովակաշարով միացվելու է գոյություն ունեցող տաք ջրամատակարարման համակարգին:

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող(1.1x1.2x2.15 (h) մ) չափերի 1 շարժական սանհանգույցից՝ բիոզուգարանից:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Շինարարական հոսքաջրերը՝ պլաստմասսե վերգետնյա խողովակներով և անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը կուղղորդվեն բակային սելավային ջրացանց, այնուհետև՝ 25մ³ ծավալով պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արդիրապարակի, ճանապարհների ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադք:

Շահագործման փուլ. Կենցաղային կոյուղու ցանցը ինքնահոս է, համակարգը մոնտաժվել է պոլիէթիլային ծալքավոր D50-D150մմ խողովակներով: Ստուգիչը տեղադրվել

Է հատակից 1,10մ բարձրությամբ: Կեղտաջրերը հավաքվում են սարքերից և ինքնահոս հեռանում բակային ցանց, որը միանում է կոյուղու արտաքին ցանցին:

Ջրամատակարարման և կոյուղու մասերը մշակված են համաձայն ՀՀ գործող շինարարական նորմերի ու կանոնների մասնավորապես ՀՀՇՆ 40-01,01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» և այլն:

Հեղեղատար համակարգ. շահագործման փուլում նախագծով նախատեսվում է տանիքներից կազմակերպված ձևով անձրևաջրերի հեռացում, որը միացվելու է գոյություն ունեցող հեղեղատարին:

Էլեկտրամատակարարում. Բժկական կենտրոնի էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն ճարտարապետական նախագծի: Էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի: Հավելված 5:

Շենքի էլեկտրամատակարարումն իրականացվելու է Աջափնյան 35/6կվ-ից թիվ 5 և բջ 32-ի 6կվ ԲՍ-ից՝ տեղակայված 2x300 կՎԱ հզորության ենթակայանից:

Շենքի առաջին հարկում 1500մ բարձրության վրա տեղադրվելու է մուտքաբաշխիչ վահանակը, որի առանձին գծերով սնվելու են տեղադրված լուսավորման վահանները: Միջանցքների լուսավորության համար տեղադրվելու են ԼԵԴ տիպի լուսատուներ: Էլեկտրամատակարարող հաղորդալարերը ընտրված են հրակայուն պղնձե ջիղերով՝ ըստ առաջարկվող սխեմաների և կտրվածքների:

Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական կյուրերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 730 մ³ ծավալով: Շինարարության ընթացքում առաջանալու է 6000կգ/տարի քանակով կենցաղային աղբ:

Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011թ. «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» 360-Ն որոշմամբ սահմանված կարգով :

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- Ամբարձիչ տելեկոպիկ-2 հատ
- Բեռնատար ինքնաթափ մեքենա-3 հատ
- Բեռնատար մեքենա- 10 տ տարողության-2 հատ
- Բետոնախառնիչ 7,0մ³ տարողության-4 հատ
- Ավտոբետոնապոմպ -2 հատ
- Միաշերտի անվավոր էքսկավատոր-2 հատ
- Հիդրավլիկ թրթուրավոր էքսկավատոր-2 հատ
- Թրթուրավոր բուլդոզեր-2 հատ,
- Ավտոկռունկ -35 տ տարողության

Օգտագործվելու են նաև այլ էլեկտրական և ձեռքի գործիքներ:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰ -ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում արտադրական հրապարակում:

Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավագի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Նյութեր. Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն
- սրբատաշ և կոպտատաշ քար
- փայտ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- բարձրորակ երեսապատման սալիկներ
- ապակի
- բարձրորակ սվաղ և ներկ

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնացման համար համապատասխան B25 դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնախառնիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին (տուֆաքար շարվածք, բազալտ) և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են ժամանակավոր շինություններում՝ տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Շինարարական հրապարակում շինանյութերը կամ սորուն նյութերը պահեստավորվելու են ժամանակավոր շինությունում՝ ծածկի տակ:

Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

Ջուր: **Շինարարության փուլում** բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, տեխնիկական կարիքների, հողի/գրունտի խոնավացման՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար անցկացվելու են ժամանակավոր ջրագծեր՝ հիվանդանոցի տարածքում առկա ջրագծերից:

Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոդիստեռնով, պայմանագրային հիմունքներով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 2տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W\ddot{E}.i. = (n \times N + n1 \times N1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 20 մարդ

N1 – սպասարկող անձնակազմի ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 720 օր:

Wխ.տ.= (4 x 0.016 + 20 x 0.025) x 720 = 406,8 մ³/շին. ժամ. կամ 0.564 մ³/օր:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը, 1700 մ², (արդիրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 250 (առավելագույնը 250օր, ներառված կրկնակի ջրցանը)

$U1 = 1700 \times 0.0015 \times 250 = 637,5$ մ³/շին. ժամ. կամ 2,55 մ³/օր:

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 1044,3 մ³/շին. ժամ կամ 3,114 մ³/օր:

Շահագործման փուլում. բժշկական կենտրոնի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են կենտրոնի գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերին՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի:

8. Շրջակա միջավայրի բնութագրերը

8. 1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 830-ից մինչև 1550 մետր բարձրությունների վրա՝ Արաքսի Հրազդան վտակի ափին, Արարատյան դաշտի հյուսիս-արևելքում՝ հյուսիսային լայնության $40^{\circ} 04'$ – $40^{\circ} 14'$ և արևելյան երկայնության $44^{\circ} 23'$ – $44^{\circ} 37'$ միջև, երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից կազմված 7–8-բալանոց սեյսմիկ և չորրորդ ժամային գոտիներում: Առավելագույն երկարությունը հյուսիսից հարավ 19,7 կմ է, արևմուտքից արևելք՝ 19,1 կմ: Կլիմային բնորոշ են տաք, չոր ամառներ և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներ: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով:

Նկար 1.

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ YEREVAN - CAPITAL

*Վարչական շրջաններ
District communities*




Աջափնյակ	Ajapnyak
Ավան	Avan
Արաբկիր	Arabkir
Դավթաշեն	Davtashen
Էրեբունի	Erebuni
Կենտրոն	Kentron
Մալաթիա-Սեբաստիա	Malatia-Sebastia
Նոր Նորք	Nor Nork
Նորք-Մարաշ	Nork-Marash
Նուբարաշեն	Nubarashen
Շենգավիթ	Shengavit
Քանաքեռ-Զեյթուն	Kanaker-Zeytun

Активация Windows

Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից (հարավ-արևմտյան մաս) 1550.0մ (հյուսիս-արևելյան մաս) բարձրության վրա: Կենտրոնի բարձրությունը մոտ 1000մ է: Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների, որոնք են՝

- 1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք հրաբխային սարահարթը ,
- 2) Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան,
- 3) Հրազդան, Գետառ և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը,
- 4) Մշակված հողերը (Նկար 2):



Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Ֆիզիկաաշխարհագրական պայմանները Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆազիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմահարված, երոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

8. 2 Սեյսմիկա և երկրաբանություն

Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ.-

ի, Երևան քաղաքը և տեղազնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

8. 3 Կլիմա և օդային ավազա

Երևանը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշերով: Դրա շնորհիվ այստեղ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձնառատ: Ամռանը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը լինում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Կլիման կիսաչոր է: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է՝ հիմնականում ամբողջ տարին: Մառախլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը հազվադեպ երևույթ է:

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի Երևան քաղաքին, որտեղ գտնվում է ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը:

Կլիման կիսաչոր է: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է հիմնականում ամբողջ տարին: Մառախլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը, հազվադեպ երևույթ է:

Երևանի կլիմայական տվյալները

Ամիս	հունվ	փետ	մարտ	ապր	մայ	հուն	հուլ	օգոս	սեպ	հոկ	նոյ	դեկ	Տարի
Ռեկորդային բարձր °C (°F)	19.5 (67.1)	19.6 (67.3)	28.0 (82.4)	35.0 (95)	34.2 (93.6)	38.6 (101.5)	41.6 (106.9)	42.0 (107.6)	40.0 (104)	34.1 (93.4)	26.0 (78.8)	20.0 (68)	42.6 (108.7)
Միջին բարձր °C (°F)	1.2 (34.2)	5.5 (41.9)	12.6 (54.7)	19.4 (66.9)	24.1 (75.4)	29.9 (85.8)	33.7 (92.7)	33.4 (92.1)	28.7 (83.7)	21.0 (69.8)	12.4 (54.3)	4.6 (40.3)	18.9 (66)
Միջին օրական °C (°F)	-3.6 (25.5)	0.1 (32.2)	6.3 (43.3)	12.9 (55.2)	17.4 (63.3)	22.6 (72.7)	26.4 (79.5)	26.1 (79)	21.1 (70)	13.8 (56.8)	6.2 (43.2)	-0.2 (31.6)	12.4 (54.3)
Միջին ցածր °C (°F)	-7.5 (18.5)	-4.4 (24.1)	0.7 (33.3)	7.0 (44.6)	11.2 (52.2)	15.4 (59.7)	19.4 (66.9)	18.8 (65.8)	13.4 (56.1)	7.5 (45.5)	1.1 (34)	-3.9 (25)	6.6 (43.9)
Ռեկորդային ցածր °C (°F)	-27.6 (-17.7)	-26 (-15)	-19.1 (-2.4)	-10.2 (13.6)	-0.6 (30.9)	3.7 (38.7)	7.5 (45.5)	7.9 (46.2)	0.1 (32.2)	-6.5 (20.3)	-14.4 (6.1)	-28.2 (-18.8)	-28.2 (-18.8)
Տեղումներ մմ (դյույմ)	20 (0.79)	21 (0.83)	29 (1.14)	51 (2.01)	42 (1.65)	22 (0.87)	16 (0.63)	9 (0.35)	8 (0.31)	32 (1.26)	26 (1.02)	20 (0.79)	296 (11.65)
Միջ. անձրևոտ օրեր	2	4	8	12	12	8	5	4	4	8	7	4	78
Միջ. ձնառատ օրեր	7	7	2	0.2	0	0	0	0	0	0.1	1	5	22
% խոնավություն	81	74	62	59	58	51	47	47	51	64	73	79	62
Միջին ամսական արևային ժամ	93.0	108	162	177	242	297	343	332	278	212	138	92	2474

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի:

Ուսումնասիրվող տարածաշրջանին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին տարեկան ջերմաստիճանը 11.5°C, բացարձակ նվազագույնը՝ -21°C, բացարձակ առավելագույնը՝ 41°C: Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.15-ին): գերակշռում են լեռնահովտային քամիները միջինը 2մ/վրկ արագությամբ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Երևանի «Արաբկիր» օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Աղյուսակ 1

Օդի ջերմաստիճանը °C

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան «Արաբկիր»	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 2

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական, ժամը 15-ին			
	Ըստ ամիսների													Ամենացուրտ ամսվա, %	Ամենատաք ամսվա, %		
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII					

Երևան «Արաբկիր»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35
-----------------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Աղյուսակ 3

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը -----, մմ օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	Ըստ ամիսների												Տարեկան	Առավել ագույն տասն օրյակ ային բարձ րու թյունը, սմ	Տար վա մեջ ձնա ծած կույ թով օրերի քանա կը	Չյան մեջ ջրի առավել ագույն քանակ ը, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան «Արաբկիր»	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			


Քամի

Աղյուսակ 4.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհող մությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												25	50	100
			Հյուսիսային (<ս)	Հյուսիսարևելյան (<սԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (<վԱրլ)	Հարավային (<վ)	Հարավարևմտյան (<վԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (<սԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							

Երևան քաղաքի ֆիզիկա աշխարհագրական բնութագիրը համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմատիվային փաստաթղթի՝ ամառը՝ շոգ, չոր է, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիների միջին արագությունը 2,0-3,0 մ/վ: Ձմեռը ցուրտ է՝ անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին տատանվում է 0°C-ից մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0- 3,0 մ/վ :

Նկար 3.



Օդային ավազան. Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան համաձայն՝ Գլխավոր (armmonitoring.am) էլեկտրոնային կայք էջի:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2022 թվականի օգոստոս ամսին կազմակերպության կողմից դիտարկումներ են կատարվել Երևան քաղաքում: Համաձայն օգոստոս ամսվա ուսումնասիրության տվյալների՝ Երևան քաղաքում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է նորմերը, իսկ ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի գտնվում են նորմայի սահմաններում և չեն գերազանցել ՍԹԿ

Նորմերը: Օգոստոս ամսվա համար վերը նշված նյութերը գտնվում են.

- փոշին՝ 0,15-ից բարձր մինչև 0,18մգ/մ³ սահմաններում (ՍԹԿ՝ 0,15մգ/մ³)՝ գերազանցել է,
- ազոտի երկօքսիդը՝ 0,03-0,04մգ/մ³ սահմաններում (ՍԹԿ՝ 0,04մգ/մ³)՝ նորմերի սահմաններում է,
- ծծմբի երկօքսիդը՝ 0,03 մգ/մ³ (ՍԹԿ՝ 0,05մգ/մ³)՝ նորմերի սահմաններում է:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդնի միջին ամսական կոնցենտրացիաները նույն ժամանակահատվածի համար գտնվում են նորմայի սահմաններում, չեն գերազանցել 0,01մգ/մ³-ը(ՍԹԿ՝ 0,04մգ/մ³):

8. 4 Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Հողային ծածկույթի համար վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները, որոնք առաջանում են գործարանների, գյուղատնտեսության, տրանսպորտի գործունեությունից, դրանց գործունեության հետևանքով առաջացող արդյունաբերական և կենդանային թափոններից: Հողերի որակի գնահատումներն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «ՀՀ հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա» N01-Ն հրամանի Հավելված 3-ին համապատասխան:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ Երևան քաղաքում հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.4-1.8 անգամ, քրոմի պարունակությունը՝ 13.8-28.8 անգամ, նիկելի պարունակությունը՝ 18.3-25.3 անգամ, պղնձի պարունակությունը՝ 19.0-34.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 4.6-38.7 անգամ, արսենի պարունակությունը՝ 5.5-11.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.3-12.2 անգամ:

8. 5 Ջրային ռեսուրսներ

Երևանի կենտրոնով հոսում է Հրազդան գետը՝ իր սելավաբեր և տարանցիկ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ, Մուշաղբյուր վտակներով: Ներկայումս դրանք ներառվել են արհեստական հունների մեջ և սելավներից ու հեղեղումներից վնասագերծվել: Կառուցվել են Երևանյան լճի, «Հաղթանակ» զբոսայգու և այլ ջրամբարներ: Երևանում կան նաև այլ արհեստական կամ բնական լճակներ, որոնց մի մասը սնվում է ստորգետնյա արտեզյան ջրերից:

Գառնու և Ապարանի բարձունքներից խողովակներով Երևան հասնող ջուրը

օգտագործվում է ոռոգման, ինչպես նաև՝ քաղաքի շատրվանների, արհեստական լճակների համար: Երևանի ներկայիս 33 ջրավազաններից առավել կարևոր նշանակություն ունի Երևանյան լիճը, որը շահագործման է հանձնվել 1967 թվականին: Ավելի քան 40 տարվա ընթացքում լիճը հիմնովին չի մաքրվել: Գետերով այնտեղ է լցվում հսկայական քանակությամբ կենցաղային և շինարարական աղբ, բերվածքների և թափոնների կուտակման հետևանքով ջրամբարի օգտագործման ծավալը գրեթե կիսով չափ նվազել է:


Հայաստանի հանրապետության տարածքում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն՝ ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 27-ի N75-Ն որոշման:

2022 թվականի 2-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 51 գետերում և Սևանա լճի 14 դիտակետում:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկագրի՝ 2022թ. 2-րդ եռամսյակում գետերում կատարված դիտարկումների արդյունքների՝ Հրազդան գետի ջրի որակը Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը ապրիլին և մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

ՀՀ մակերևութային ջրերի որակը 2020 թվականին



Հիդրոեկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Համայնքի տարածքի հիդրոեկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Արարատյան ՋԿՏ-ում հիդրոեկրաբանական մշտադիտարկումները կատարվում են 23 ստորերկրյա ջրաղբյուրներում:

8. 6 Կենսաբազմազուրյուն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները: Տարածքում բուսածածկույթը բացակայում է: Տարածքն արդեն իսկ մարդու ակտիվ ազդեցության գոտում է և երկար տարիներ բնակեցված:

Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի

ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝

1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն),
2. Տոմիլյար (անապատային):

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակները:

Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրագույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը բացառվում է:

8.7 Պատմության և մշակութային հուշարձաններ

Հայաստանի հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Երևան քաղաքի պետական ցուցակը ներառում է 512 հուշարձան՝ 245 պահպանական միավորով:

Նախատեսվող գործունեության Աջափնյակ վարչական տարածքում առկա են մի շարք պատմամշակութային հուշարձաններ, որոնց ցանկը ներկայացվում է համաձայն՝ ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման:

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը.

Աղյուսակ 5

Հուշարձան	Կառուցված	Վայր, հասցե	Հավելյալ նշումներ
Աշտարակ	մ.թ.ա. 2 հզ կես	Աջափնյակի հին գերեզմանոցում	հայտնաբերված՝ 1995 թ.
Բնակատեղի	մ.թ.ա. 2 հզ	հվ-ամ մասում, Սիլիկյան թաղամաս	երկաթուղու Սիլիկյան կայարանից 2,5-3 կմ հս, «Դեմեր» վայրում
Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ	-	բնակատեղիի ամ մասում, երկաթուղու Սիլիկյան կայարանից 0,5 կմ հս
Դամբարան-1	մ.թ.ա. 2-1 հզ	-	երկաթգծից 30 մ ամ
Դամբարան-2	մ.թ.ա. 2-1 հզ	-	նախորդից 50 մ ամ
Դամբարան-3	մ.թ.ա. 2-1 հզ	-	նախորդից 50 մ ամ
Խճանկար	1987 թ.	Մարգարյան փող. 6	Հանրապետական կլինիկական հիվանդանոցի նիստերի դահլիճի մասնաշենքի ճակատին, նկ՝ Ա. Բաղդասարյան, Է. Կարայան, Ջ. Միրզոյան, Վ. Պետրոսյան
Հուշարձան Արցախյան պատերազմում զոհված աջափնյակցի ազատամարտիկներին	1998 թ.	Սեբաստիայի և Միրաքյան փող. միջնամասում	
Հուշարձան Համագասպ Բաբաջանյանի	1982 թ.	Հ. Շիրազի փող. 25	ԴՕՍԱԱՖ-ի համանուն միացյալ տեխնիկական դպրոցի բակում, քանդ.՝ Գ. Եփրոյան, ճարտ.՝ Ռ. Մանուկյան
Հուշարձան Արամայիս Երզնկյանի	1985 թ.	Արզումանյան փող. 8	թիվ 118 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Ս. Բարխուդարյան
Հուշարձան Մեծ եղեռնի Սեբաստացի զոհերին	1970 թ.	Գ. Զոհրապ և Ա. Սարգսյան փող. խաչմերուկ	ճարտ.՝ Ռ. Իսրայելյան
Հուշարձան Պեյո Յավորովի	1966 թ.	Արզումանյան փող. 22	թիվ 131 համանուն դպրոցի առջև, ճարտ.՝ Գ. Ահարոնյան
Վիշապաքար	մ.թ.ա. 3-2 հզ	Մարգարյան փող. 2	ՀՀ ԳԱԱ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի առջև
Քանդակ «Անուշ և Սարո»	1973 թ.	Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգի	քանդակագործ՝ Լևոն Թոքմաջյան
Քանդակ «Արուս»	1968 թ.	Մարգարյան փող. 2	Երևանի ֆիզիկայի ինստիտուտի առջև, քանդ.՝ Ա. Չաքմաքչյան
Քանդակ «Լոռեցի Սարո»	1986 թ.	Հովհ. Թումանյանի	քանդ.՝ Ս. Բաղդասարյան

		անվ. մանկական զբոսայգում	
Քարայր-կացարան «Աջափնյակ-1»	մ.թ.ա. 14-12 դդ. 16-17 դդ.	Հրազդանի աջ ափին	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի ինստիտուտի պարսպի մոտ, գետից 60 մ վերև, հայտնաբերված 1975 թ.
Քարայր-կացարան «Աջափնյակ-2»	մ.թ.ա. 14-13 դդ. 16-17 դդ.	Հրազդանի աջ ափին	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի ինստիտուտի փորձակայանի մոտ, հայտնաբերված 1975 թ.
Քարայր-կացարան «Աջափնյակ-3»	16-17 դդ.	Հրազդանի աջ ափին	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի ինստիտուտի փորձակայանի մոտ, ժայռածածկ, հայտնաբերված 1975 թ.
Քարայր-կացարան «Աջափնյակ-4»	16-17 դդ.	Հրազդանի աջ ափին	Դավիթաշենի կամրջից 0,5 կմ հս, կիրճի 3-րդ դարավանդին, հայտնաբերված 1975 թ.

8. 8 Բնության հուշարձաններ

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.



Աղյուսակ 6.

1	Երկրաբանական «Անանուն» բազալտներ	սյունաձև	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ
2	«Անանուն» բազալտներ	սյունաձև	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արևմտյան ճակատամուտքի մոտ

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

8. 9 Հատուկ պահպանվող տարածքներ

Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը:

Երևանի բուսաբանական այգի		0.8 քկմ	1935
Էրեբունի արգելոց		1.2 քկմ	1981

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

8. 10 Սոցիալ-տնտեսական

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ցուցանիշները՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքին համապատասխան.

Աղյուսակ 8.

Տարածքը Territory	223 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the city in the territory of the Republic of Armenia , %	0.7
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	3 330.0 հա/ ha
ադ թվում՝ վարելահողեր including - arable land	913.2 հա/ ha
Վարչական շրջաններ District communities	12
Բնակչության թվաքանակը 2021թ. ստրեսկզքի դրությամբ Population number as of the beginning of the year, 2021	1 091.7 հազ. մարդ/ thsa. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020 թ.,% Share of city population in the total population of the Republic of Armenia 2020, %	36.8

Համաձայն Վիճակագրական կայք էջի՝ Երևան քաղաքի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 1091,747 մարդ, որից 504770 կազմում են տղամարդիկ, 586977-ը՝ կանայք:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Համաձայն Երևանի քաղաքի զարգացման 2018-2023թթ. հնգամյա ծրագրի՝ Աջափնյակ վարչական տարածքի մակերեսը կազմում է 2582 հա:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ): Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Ըստ 2019-2023թ. Երևան քաղաքի զարգացման ծրագրի՝ մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 40.8 %
- շինարարություն՝ 61.0 %
- մանրածախ առևտուր՝ 74.0 %
- ծառայություններ՝ 82.2 %

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը, գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և երկաթուղով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

2020թ. դրությամբ Երևան քաղաքում առկա են 224 պետական և ոչ պետական նախադպրոցական, 252 պետական և ոչ պետական հանրակրթական կրթական հաստատություններ, 50 երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 19 պետական բարձրագույն

ուսումնական հաստատություններ, 31 առողջապահական կազմակերպություններ և այլն:

Համաձայն 2019-23թ. Երևան քաղաքի զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցությունն առաջացնող շուրջ 420 կազմակերպություն: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի (ԱԳԳ) բարձր մակարդակով: Երևան քաղաքի մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման հիմնական պատճառներից են քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողօտարումները, հողի էռոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Այդ նպատակով կարևոր է Երևան քաղաքում բուժերային գոտիների պահպանումը, վերականգնումը և կանաչապատ տարածքների բարելավումը, ավելացումը, ոռոգման ցանցի ընդլայնում և բարեկարգումը:

Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա: Քաղաքի ոչ բարենպաստ Էկոլոգիական իրավիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, պաշտպանիչ կանաչ բուժերային գոտիների ստեղծման անհրաժեշտություն:

9. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը (բնապահական կառավարման պլան)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի տարածքում: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Մարգարյան փողոց հ. 6/2 գոյություն ունեցող հիվանդանոցի տարածքում, բժշկական կենտրոնի մասնաշենքի ընդլայնման՝ ավտոկայանատեղիի, կցակառույցի և հասարակական շինության կառուցում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան հիմնականում շինարարության փուլում՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, աղմուկի մակարդակի ավելացման և մեքենաների տեղաշարժի ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ: Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու գոյություն ունեցող կաթսայատան աշխատանքի արդյունքում ծխագազերի արտանետումների և բժշկական գործունեության հետևանքով առաջացող բժշկական և այլ թափոնների կառավարման հետ:

Գործունեության իրականացումը լանդշաֆտի ծանրաբեռնվածություն չի առաջացնի, քանի որ գործունեության ենթակա տարածքն արդեն կառուցապատված է:

Բժշկական կենտրոնի վերակառուցումը նպաստելու է հանրապետությունում և համայնքում բնակչության բժշկական սպասարկման որակի, առողջապահական համակարգի բարելավմանը:

Հայտով նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի և մարդու

առողջության վրա կլինեն նվազագույնը:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, աղմուկի մակարդակի բարձրացման, թափոնների կառավարման հետ:

9.1 Օդային ավազան

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխազագերի արտանետումների և հողային աշխատանքների(փորման, բեռնման, հարթեցման) ընթացքում առաջացող փոշու տեսքով:

Շինարարության փուլում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմայի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն տարածքի գոյություն ունեցող ելակետային տվյալների հետ:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինհրապարակը կազմակերպվելու է ցանկապատով,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

Շահագործման փուլում օդային ավազան արտանետումները լինելու են բժշկական կենտրոնի գոյություն ունեցող կաթսայատան աշխատանքի՝ գազի այրման արդյունքում՝ համաձայն ընկերության 2018թ.-ի փետրվարի 14-ին N 000012/ բնապահպանության նախարարի(այժմ՝ շրջակա միջավայրի նախարարություն) կողմից հաստատված օդային ավազան արտանետումների նախագծի՝ արտանետման քանակները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում(ածխածնի օքսիդ՝ 3,756տ/տարի, ազոտի օքսիդներ՝ 1,284տ/տարի): Կաթսայատանը որևէ փոփոխություն չի նախատեսվում:

Անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում՝ օդային ավազան վնասակար

Նյութերի արտանետումների թույլատրելի քանակները վերահսկելու և կանխելու նպատակով նախատեսվում է.

- սահմանափակել վառելիքի մատակարարումը, կաթսաների գերբեռնված աշխատանքը,
- անհրաժեշտության դեպքում ժամանակավորապես դադարեցնել սարքավորումների աշխատանքը և այլն:

9.2 Հողային ռեսուրսներ

Գործունեության տարածքը արդեն կառուցապատված է:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 7000մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման և ամրացման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, գազմատակարարման, էներգամատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքներից հանված հողը՝ հողային գրունտ, շինարարության ընթացքում օգտագործվելու է տարածքի հարթեցման և հետլիցք անելու համար՝ 4900մ³: Իսկ գրունտները, որոնք կպարունակեն խոշոր քարաբեկորներ՝ 2100մ³, շինադրի հետ կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Գործունեության վայրում բացակայում է բուսահողը, որի պատճառով բուսահողի պահպանման միջոցառումներ չեն նախատեսվում: Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման հարթակում: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը:

9.3 Ջրային ռեսուրսներ

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են բիոզուգարան,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 25մ³ չափերի պարզարան,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադժ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից,
 - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
 - շինարարական աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է և հեռացվելու է կապալառու կազմակերպության կողմից:
- Շահագործման փուլում շենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են քաղաքային ջրատարին և կոյուղատարին:

9.4 Կենսաբազմազանություն

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է խիտ կառուցապատման գոտում:

Բուսական աշխարհ: Տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, տարածքը կառուցապատված է, բուսականությունը բացակայում է:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկվել է մարդկային գործունեության ազդեցությանը:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներն խիտ կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում հնարավոր չի կենդանատեսակների, բնադրավայրերի, միգրացիոն ուղիների, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների առկայությունը տարածքում:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

9.5 Թափոններ

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական նյութերի մնացորդներ, քանդման ընթացքում առաջացած շինանյութերը, շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 730մ³ ծավալով,
- փորման արդյունքում հանված խոշոր քարաբեկորներով վտանգավոր թափոններով չաղտոտված հողային զանգված(վտանգավորության դաս V դաս, ծածկագիր՝31401100 08 99 5)՝ 2100մ³ ծավալով,
- կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 6000կգ/տարի:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» և 2006թ. հոկտեմբերի 26-ի N342-Ն՝ «Փորման աշխատանքերի ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» հրամանների պատկանում են վտանգավորության 4-րդ և 5-րդ դասերին:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Երևանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Թափոնների տեղափոխման վայրը և շինհրապարակում շինաղբի և հողային զանգվածի կուտակման վայրը՝ շինհրապարակում կճշտվի շինթույլտվության փաստաթղթում:

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1.5x1.0մ³ մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=25*120= 3000կգ/տ կամ 8.4կգ/օր/ըստ աշխատանքային օրերի՝ 360 օր/$$

Շինարարությունը տևելու է 2 տարի, հետևաբար

$$M=3000*2= 6000կգ/տարի$$

Շինհրապարակում շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմվելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր,

- բացառվելու է հարակից տարածքի աղտոտումը թափոններով, աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,

- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր, ցանկապատի մնացորդները) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 4 հատ 1,5x1,0մ³ տարողության պլաստմասե աղբամաններ: Տեղադրվելու են նաև կենցաղային աղբի տեսակավորման աղբամաններ: Աղբահեռացումը կատարվելու է Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011թ. «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» 360-Ն որոշմամբ սահմանված կարգով:

9.6 Աղմուկ և թրթռում

Շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿԸ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒԲ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒԲ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒԲ» սանիտարական նորմերով: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:

Շահագործման փուլ.

- շենքն ապահովված է լինելու օդամուղների և ջեռուցիչ սարքերի վիբրացիայի և աղմուկի դեմ պաշպանիչ միջոցներով,
- օգտագործվող օդափոխիչ և սառեցման համակարգերը պարբերաբար ենթարկվելու են ստուգման՝ շենքում աղմուկի մակարդակը ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխանեցնելու նպատակով:

9.7 Արտակարգ իրավիճակներ

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, քամիների, սողանքների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) եզրակացությունը:

Շինության կառուցման նախագիծը համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին:

Շինարարության փուլում հակահրդեհային պաշտպանության նպատակով նախատեսվում է 2 տոննա տարողության հակահրդեհային ջրի բաք: Տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդափոխվող և օդամշակման սարքերի տեղադրումն իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, ըստ շահագործման ռեժիմի, հրդեհային բաժանմունքների և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

Շինարարության փուլում գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում են.

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային միջոցառումների վահանակներով՝ կրակմարիչներով հիդրատներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով,

- շինհրապարակը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից,

- տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման նպատակով,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում նախատեսվող տնտեսական պահեստն օգտագործվելու է որպես բնակչության համար ապաստարան՝ հանրապետությունում ռազմական գործողությունների առկայության դեպքում բնակչության անվտանգությունն ապահովելու համար:

Ապաստարանն ապահովված է լինելու համապատասխան մուտքով և ելքով:

Շահագործման հանձնելուց առաջ բժշկական կենտրոնը կներկայացվի «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

Էներգոարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման: Շենքի ջեռուցման, օդափոխման, օդի լավորակման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների Էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Շենքն ապահովված է լինելու.

- դիտարկման և վերահսկման էլեկտրոնային համակարգերով, տեսախցիկներով, համաձայն՝ ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջների,

- էլեկտրամատակարարման ավտոմատ անջատիչներով, վթարային ելքի ցուցանիշներով, հակաձխային օդափոխության արտածման համակարգերով,

- արտաքին լուսավորության, օդափոխության, սառմամատակարարման համակարգերով,

- մեկական կրակմարիչներով՝ յուրաքանչյուր կառուցված հարկում,

- ավտոմատ հակահրդեհային ազդանշանային համակարգերով, հակահրդեհային ազդանշանային, ձայնալուսային սարքերով:

Շենքի Էներգախնայողության և Էներգաարդյունավետության նպատակով նախատեսվում է.

- շենքի արտաքին պատերի ջերմամեկուսիչ կյուբերով պատում, շենքի երեսապատում 40սմ հաստություն ունեցող տուֆաքարե շարվածքով,
- նորմավորված հրակայուն, ջրամեկուսիչ, գոլորշակայուն կյուբերի, հերմետիկ փակվող պատուհանների դռների օգտագործում,
- արտաքին պատերի, տանիքի ստորգետնյա մասերի և հինքերի ջրամեկուսացում:

9.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ կյուբերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շինարարության ընթացքում տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ:

Շինաշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԵԿ-3-480* նորմերի:

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության

նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու է 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- շինարարության ընթացքում բանվորներն օգտվելու են բժշկական կենտրոնի ճաշարանից և անհրաժեշտության դեպքում՝ հիվանդանոցի բուժ. կետից,

- աշխատողներն ապահովված են լինելու անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (ժամանակավոր՝ տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս, շինհրապարակում բեռի բարձրացման ժամանակ վերջինից պահպանելով 1 մ հեռավորություն,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին,

- տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում բշկական կենտրոնն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/–11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան: Մասնավորապես.

- հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա անցումներն ապահովված է լինելու թեքահարթակներով,
- մուտքը տարածք կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

9.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Գործունեության և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

9.10 Սոցիալական

Գործունեության իրականացումն ունենալու է դրական սոցիալական ազդեցություն, քանի որ նպաստելու է համայնքի առողջապահական համակարգի, բնակչության բուժսպասարկման վիճակի բարելավմանը: Բացի այդ նպաստելու է բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը (աշխատատեղ և բնակչության եկամուտների ավելացում):

Շինարարության փուլում աշխատելու է 20 մարդ, որից 4 մարդ ճարտարապետատեխնիկական անձնակազմ՝ հերթափոխային գրաֆիկով: Ամենաճանաչված հերթափոխով աշխատող մարդկանց թիվը կազմելու է 20 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման ընթացքում բշկակական կենտրոնի հնարավոր առավելագույն ծանրաբեռնվածությունը կազմելու է 20 մարդ:

Շինարարության ընթացքում առաջանալու են բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում չի նախատեսվում:

Բժշկական կենտրոնի կառուցման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր:

- բնակչության զբաղվածության աճին,
- նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարվելու են սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառվելու են շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները,
- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

Շահագործման փուլում կենտրոնի կառուցումը կնպաստի.

- հանրապետության և քաղաքի բուժսպասարկման բարելավմանը,

- հիվանդների այցելուների համար առավել նպաստավոր սպասարկման կազմակերպմանը, բուժման ընթացքում վերջիններիս շփման հնարավորությունների ապահովմանը:

- նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության զբաղվածության աճին:

9.11 Բարեկարգում և կանաչապատում

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում:

Շինարարության փուլում նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից,

- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից,

- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:

Կանաչապատում. տարածքում առկա է 384մ² մակերեսով կանաչապատ գոտի/այգի/ և գազոնապատված հատվածներ: Կանաչ տարածքների ոռոգումը կատարվում է տարածքում գոյություն ունեցող ոռոգման համակարգից:

Շինարարական աշխատանքների ընթացքում կխախտվի 330մ² մակերեսով գազոնային հատված, կհատվեն մի քանի արդեն չորացած ծառ ու թուփ:

Կանաչ տարածքի պահպանման և ծառերը չվնասելու համար շինարարության ընթացքում նախատեսվում է.

- առկա ծառերի կամ թփերի մոտ շինաշխատանքների իրականացման դեպքում, վերջիններս իրենց բնաբաժակներով ցանկապատվելու են փայտե տախտակներով կամ այլ կոշտ նյութերով՝ ծառի բնից կամ թփից առնվազն 0,5 մետր հեռավորությամբ,

- բացառվելու է ծառերի սաղարթից և թփերից մինչև 1,5 մետր հեռավորության վրա որևէ շինարարական նյութի կուտակումը կամ պահպանումը, ծանր տեխնիկայի կիրառումը և կայանումը, շաղախի պատրաստումը՝ ծառերը և ծառերի արմատային համակարգերի վնասումից խուսափելու նպատակով:

Շինարարության ավարտից հետո նախատեսվում է.

- կվերականգնվի վնասված գազոնային շերտը, կթարմացվի ամբողջ գազոնային տարածքը,

- չորացած ծառերի և թփերի հատումը կկատարվի Երևանի համանքապետարանի հետ համաձայնության առկայության դեպքում:

Տարածքի լրացուցիչ կանաչապատում չի նախատեսվում:

10. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- իրականացվելու է բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողներն իրազեկվելու են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները,
- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- ապահովվելու է հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան,
- թափոնների տեղափոխումը կազմակերպվելու է համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից ապահովվելու է նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացումը,
- կատարվելու է ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- իրականացվելու են շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
- հարակից շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- նշանակվելու է արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
- պահպանվելու է շինարարության իրականացման ժամանակացույցը,
- ապահովվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացումը:
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմում է տարեկան մոտ 200,0 հազար դրամ, ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

11. Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

- Կառուցապատվող օբյեկտի շինարարական հրապարակին կից՝ տեսանելի վայրում, Կառուցապատողը փակցնում է տվյալ օբյեկտի շինարարական աշխատանքներին վերաբերող ցուցատախտակ, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.
- կառուցապատման օբյեկտի վերջնական տեսքը նկարագրող գունավոր էսքիզային պատկերը, շինարարության թույլտվության համարը և ամսաթիվը, շինարարական աշխատանքների սկիզբը և ավարտը (ամիս և տարեթիվ), կառուցապատման օբյեկտի մակերեսը, հարկայնությունը և նպատակային

նշանակությունը, Կառուցապատողի (կամ պատվիրատուի) , կառուցապատման օբյեկտի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության և այլ պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները, հեռախոսահամարները:

12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

<p>1</p>	<p>Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավացում և ճանապարհների ջրցան, - մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում, - բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթելենային թաղանթով, - շինհրապարակը կազմակերպվելու է ցանկապատով, - բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը: 	<p>Կապալառու</p>	<p>«ՎԱՊՄԳՅԻ» ՓԲԸ</p>
<p>2</p>	<p>Հողային ռեսուրսներ</p>	<p>Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր</p>	<p>Կապալառու</p>	<p>«ՎԱՊՄԳՅԻ» ՓԲԸ</p>

		<p> նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է. </p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար, - շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավագ կամ մանրախիճ, - մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քայուղերի արտահոսքի 		
--	--	---	--	--

		<p>դեպքում, փոփոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն փոխարինվելու է նորով,</p> <ul style="list-style-type: none"> - մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման սարքի միջոցով: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչև շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: 		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում, - տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը ներքին բակային ցանցով ուղղվելու են շինհրապարակում տեղադրված բիոզուգարան, - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և 	Կապալառու	«ՎԱՊՄԳՅԻ» ՓԲԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<p>պարզարանում կուտակված ջուրը, -պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադր, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով:</p> <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.</p> <p>- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով, - շինհրապարում տեղադրված բիոզուգարանը շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվի:</p> <p>- բժշկական կենտրոնի ջրամատակարարման համակարգերը միացվելու են քաղաքային ջրատարին:</p> <p>- կոմունալ-կենցաղային հոսքաջրերի և կեղտաջրերի հեռացումը կատարվելու է դեպի համայնքային ջրահեռացման ցանց:</p>		
--	--------------------------------	---	--	--

4	Թափոններ	<p>Թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, - շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, - շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, - շինաղբի տեղափումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, - կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության, - շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր, - բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում, 	Կապալառու	«ՎԱՊՄԳՅԻ» ՓԲԸ
---	----------	---	-----------	---------------

		<p>- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:</p> <p>Շահագործման փուլում կենցաղային թափոնները հավաքվելու են տարածքում տեղադրված տեսակավորման աղբարկղերի մեջ և տեղափոխվելու են աղբահանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:</p>		
- 4) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով,
- 5) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,
- 6) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:

5. Բաժանորդն իրավունք ունի՝

- 1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկային փաստաթուղթ չներկայացնելու դեպքում կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,
 - 2) պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ ապահովագրակցումը կամ ստուգաչափումը, իրականացնել իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 3) կապարակներել առևտրային հաշվառքի սարքը,
 - 4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:
6. Մատակարարը պարտավոր է՝
- 1) ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայությունների ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխան, իսկ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում նաև՝ պայմանագրով ամրագրված չափաքանակներով,
 - 2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակներում՝ կանոններով սահմանված կարգով,
 - 3) առևտրային հաշվառքի սարքի ապահովագրակցումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխանել բաժանորդի դիմումին՝ հանձնաձևերեն ներկայացնելով դիմումի անուշխամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
 - 6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը, ինչպես նաև այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
 - 7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատակարարված ծառայությունների համար հաշվարկային փաստաթուղթը՝ սույն պայմանագրի և կանոնների համաձայն,
 - 8) բաժանորդի կողմից հաշվարկային փաստաթղթում վճարման ենթակա գումարի հաշվարկի ճշտությանը կասկածելու դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների քանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոնների համաձայն կատարել ուղղում, չդադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ռոջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,
 - 9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:
7. Մատակարարն իրավունք ունի՝
- 1) Բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող

տարածք մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայությունը,
2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

4. ՄԱՏԱԿԱՐԳՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խմելու ջրի քանակը որոշվում է պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:
9. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակին: Սույն պայմանագրով կարող է սահմանվել, որ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակը հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի միջոցով:
10. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
11. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
12. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարածայնությունները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խմելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվիճարկվող մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում՝ մինչև վեճի վերջնական լուծումը:

5. ՄԱՏԱԿԱՐԳՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:
14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:
15. Հաշվարկային ամսվա համար բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց մատակարարը կազմում և բաժանորդին է ներկայացնում հաշվարկային փաստաթուղթ՝ կանոններով սահմանված կարգով:
16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է կանոններով սահմանված կարգով:

17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն անբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո մատակարարը պարտավոր է վերսկսել բաժանորդին ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:
18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:
19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկված խմելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված լինելու դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:
21. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը չվճարելու դեպքում ոչ բնակիչ բաժանորդը մատակարարին յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարվում է տուժանք՝ չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:
22. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:
23. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

7. ԱՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(լրացնում են Կողմերը)

24. Սույն գլխում կողմերի սահմանած այլ պայմաններ չեն կարող հակասել սույն պայմանագրին, կանոններին և հանձնաժողովի այլ իրավական ակտերին:
25. *Վճարված գումարի վերաբերյալ հարցերը լուծվում են հարցի առկայության դեպքում:*
Վճարված գումարի վերաբերյալ հարցերը լուծվում են հարցի առկայության դեպքում:
8. ԱՆՎՈՒՄԵՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՅՑ (ՖՈՐՍ ՄԱՃՈՂ)
26. Կողմերը պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի:

Պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարման ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնիկական աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողակներ), գործադրվող ապահովագրության պայմանագրերի պարտավորությունները, պատերազմները, սակայն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ չի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

27. Կողմերը պարտավոր են վերողիշալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՑՈՒՄԸ

28. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՑՈՒՄԸ

29. Սույն պայմանագրին ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

30. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

31. Հանձնաժողովի կողմից խնելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ) նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

32. Սույն պայմանագիրը լուծվում է՝

- 1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.
- 2) բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.
- 3) մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

33. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

11. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

34. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով կամ հանձնվել են ստացվանով, եթե առանձին դեպքերի համար կանոններով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

35. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց ծանուցման նոր հասցեի վերաբերյալ:

36. Պայմանագրի անբաժանելի մաս է կազմում անտարային հաշվառի սարքի վերաբերյալ հավելվածը:

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
 Գտնվելու վայրը՝ Բ.Երևան, Արուսյան 66ա
 Հեռախոս՝ 1-85
 ՀՎՀՀ՝ 02655115
 Էլ. փոստ՝ office@veolijur.am
 Հ/հ 11500351562015

Բանկ՝ «Հայրիցներբանկ» ՓԲԸ
 Գործունեության փոխադրված N° 0001
 Գլխավոր մեղմարձիչի անունով
 (ստորագրություն և ստորագրություն)

Կ.Տ.
 Կատարող՝ *[Ստորագրություն]*
 (Ստորագրություն)
[Ստորագրություն]
 (Ստորագրման անվանում)
[Ստորագրություն]
 (պաշտոնը և անուն, ազգանունը)

Բաժանորդ՝ *[Ստորագրություն]*
 Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝ *[Ստորագրություն]* 6/2
 Ծանուցման հասցե՝ *[Ստորագրություն]* 6/2
 Էլ. փոստ *[Ստորագրություն]* շս
 Հեռախոս *[Ստորագրություն]* 34-18-83
 ՀՎՀՀ *[Ստորագրություն]* 01202252
 Բանկ *[Ստորագրություն]* ԲԻՆԲԱՆԿ
 Հ/հ *[Ստորագրություն]* 16200281423/9
 Դեկլարացիայի հիմնարկային անձ
 (ստորագրություն և ստորագրություն)
[Ստորագրություն]
 (ստորագրություն և ստորագրություն)
 (ստորագրություն և ստորագրություն)
 (ստորագրություն և ստորագրություն)
 (ստորագրություն և ստորագրություն)

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2013 թվականի հունիսի N176և որոշմամբ

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
(ՄԱՏԱԿԱՐԱՐ - ԲԱԺԱՆՈՐԴ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ))**

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 012.03.13.0457

Գ. Երևան

«04» 04 2013 թվական

պայմանագրի կնքման վայրը

Մատակարարը՝ ՀՀ Իսպանա Գազարդ ԵՊ ԳԳԻ
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Երևանի ԳԳԻ Իսպանա Գազարդ 141/3
(մասնաճյուղի անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Կրիստին Գ. Նիսիսյանի
(սբախտոնը, անունը, ազգանունը)

որը գործում է ԳԳԻ Իսպանա Գազարդ Լ. Սյուր հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Բաժանորդը՝ Կազմակերպության անվանումը, գազատարման համակարգի

Իսպանա Գազարդ Լ. Սյուր և ԳԳԻ Իսպանա Գազարդ Լ. Սյուր N140
գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,

Սարգսյան 6/2

գազատարման համակարգի գտնվելու վայրը)

ի դեմս _____
(սբախտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է Կազմակերպություն հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի
մասին.

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.
 - 1) **Հանձնաժողով**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

- 2) **ԳՄՕԿ**՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N95L որոշման 1-ին կետով հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ:
- 3) **Հաշվարկային ամիս**՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացույցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացույցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին:
- 4) **10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդ**՝ անձ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացույցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 հազար խորանարդ մետրը (Ցելսիուսի 20 աստիճանի և 101.325կՊա կամ 1.033227կգ/սմ³ ճնշման պայմաններում):

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՎԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել բնական գազ, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

3. ԿՐՈՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ԳՄՕԿ-ով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:
4. Մատակարարը պարտավոր է.

1) սահմանազատման կետում ապահովել Բաժանորդի գազամատակարարումը «Բնական վառելանյութային գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային նպատակների համար» ԳՕՍՍ 5542-87-ով սահմանված պայմաններին համապատասխանող

Իր պարտավորված կամ չտրամադրված բնական գազով:

- 2) 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդին բնական գազ մատակարարել սույն պայմանագրով ամրագրված ժամանակացույցով և չափաբանակներով (Հավելված №3):
- 3) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված բնական գազի համար վճարման փաստաթղթերը՝ ԳՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 4) չխոչընդոտել իր սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառչի կայան Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների մուտքը՝ օպերատիվ տեղեկատվություն ստանալու, կամ առևտրային հաշվառչի սարքերը կնքելու, կամ կնիքների առկայությունը ստուգելու, կամ բնական գազի որակական հատկանիշներն ուսումնասիրելու նպատակով բնական գազի նմուշառման համար:
- 5) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխան տալ Բաժանորդի դիմումին (բողոք, հարցադրում)՝ հանգամանորեն ներկայացնելով

Բաժանորդի դիմումի անուշխարհ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն Բաժանորդին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ:

- 6) գազապատման համակարգում վթարների և վթարային իրավիճակների դեպքերում Բաժանորդի կամ այլ անձանց անհանգստացնող դադարեցնել նրա գազամատակարարումը, վերսկսել այն դադարեցման պատճառների վերացումից հետո՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելով Բաժանորդին:
- 7) գազամատակարարման ընդհատման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում՝ բացատրությամբ վթարների ու վթարային իրավիճակների Բաժանորդին նախապես տեղեկացնել և գազամատակարարումը վերականգնել ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:
- 8) սույն պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման վերաբերյալ Բաժանորդի դիմումի հիման վրա դադարեցնել Բաժանորդի գազամատակարարումը հնարավորինս սեղծ ժամկետում, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

5. Բաժանորդը պարտավոր է.

- 1) վճարել մատակարարված բնական գազի դիմաց սույն պայմանագրով և ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:
- 2) չօգտագործել բնական գազը կամ գազապատման համակարգը տեխնիկական պայմաններով, նախազգուշացում և գազատարազրկումների տեխնիկական փաստաթղթերով (անձնագրով) չնախատեսված նպատակներով ու պայմաններով:
- 3) գազապատման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների, կամ անսարքության, մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում, ինչպես նաև բնական գազի արտահոսք հայտնաբերելու դեպքում անմիջապես ընդհատել բնական գազի սպառումը և այդ մասին անհապաղ հայտնել Մատակարարին:
- 4) իր նախաձեռնությամբ գազապատման համակարգում փոփոխություններ (այդ թվում՝ սարքավորումների, դրանց հզորության, սպառման ծավալների) կատարելու համար, ԳՄՕԿ-ով սահմանված կարգով դիմել Մատակարարին:
- 5) չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազապատման համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացնում է իր լիազորությունները հավաստող ժառայողական վկայական՝ լուսանկարով և հայտնում է Բաժանորդի քարտի համարը:

Մատակարարի ներկայացուցչի մուտքը գազապատման համակարգի տեղակայման տարածք իրականացվում է Իր պարտավորված կամ չտրամադրված

- 6) իր սեփականությունը հանդիսացող (իր կողմից օգտագործվող) գազապատման համակարգի տեղակայման տարածքը օտարելու (օգտագործման իրավունքը դադարելու) դեպքում դիմել Մատակարարին վերջնահաշվարկ կատարելու և պայմանագիրը լուծելու համար:

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԴԱՇՎԱՌՈՒՄԸ

6. Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակը որոշվում է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի միջոցով՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում: Բաժանորդին իրավունք ունի մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ջուլմետրի գրանցմանը:
7. 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում Մատակարարի և Բաժանորդի պատասխանատու անձինք Հաշվարկային ամսվա համար ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում կազմում են երկկողմ ակտ՝ Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակի մասին: Այն դեպքում, երբ Բաժանորդը (Բաժանորդի պատասխանատու անձը) ԳՄՕԿ-ով սահմանված կարգով չի մասնակցում սույն կետում նշված ակտի կազմմանը, ապա Մատակարարը կարող է ակտը կազմել միակողմանի: Մատակարարի կողմից կազմված ակտը հիմք է հանդիսանում Բաժանորդին վճարման փաստաթուղթ ներկայացնելու համար:
8. Առևտրային հաշվառքի սարքի՝ այդ թվում նոր առևտրային հաշվառքի սարքի, տվյալները գրանցվում են սույն պայմանագրի N1 հավելվածում:
9. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում բնական գազի քանակը վերահաշվարկվում է ԳՄՕԿ-ով սահմանված կարգով:
10. Հաշվարկային ամսում, երբ առևտրային հաշվառքի սարքն աշխատել է իր չափման ընդգրկույթից (Qmin-Qmax) դուրս, Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակությունը հաշվարկվում է՝
 - 1) եթե չափումը կատարվել է ընդգրկույթի ստորին սահմանից (Qmin) ցածր, ապա ծախսն ընդունվում է *Qmin 100* տոկոսին հավասար,
 - 2) եթե չափումը կատարվել է ընդգրկույթի վերին սահմանից (Qmax) բարձր, ապա ծախսն ընդունվում է *Qmax 100* տոկոսին հավասար:Ճնշման անկման սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի դեպքում նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվարկային եղանակով՝ համաձայն ԳՕՍՏ 8.563-97-ի՝ «Գեղուկների և գազերի քանակության և ծախսի քանակության չափումը ճնշման փոփոխական անկման մեթոդով» և ԳՕՍՏ-8.586-2005-ի՝ «Գեղուկների և գազերի ծախսի ու քանակության չափումը ստանդարտ նեղազնող սարքերի միջոցով»: Այլ սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի համար նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվառքի սարքի անձնագրային տվյալների հիման վրա՝ համաձայն համապատասխանության սերտիֆիկատի:

5. ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

11. Մատակարարվող բնական գազի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:
12. Հանձնաժողովի կողմից բնական գազի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:
13. Հաշվարկային ամսում մատակարարված բնական գազի համար (10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում՝ սույն պայմանագրի 7-րդ կետին համապատասխան կազմված ակտի հիման վրա) Մատակարարը ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում Բաժանորդին ներկայացնում է

է վճարման փաստաթուղթ: Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի դիմաց վճարման ենթակա գումարը որոշվում է Հանձնարարի կողմից սահմանված համապատասխան սակագնի և մատակարար բնական գազի քանակության արտադրյալով: Բաժանորդը մատակարար բնական գազի դիմաց վճարումը կատարում է ներկայացված վճարման տարրի հիման վրա՝ ԳՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում: Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարվելիք բնական գազի համար կանխավճարված վճարման այլ երաշխիքներ պահանջելու դեպքերն ու կարգը սահմանված ԳՄՕԿ-ով:

14. Բոլոր դեպքերում, եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպառել է միլիոն հազար խորանարդ մետր բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԳՄՕԿ-ով և սույն պայմանում սահմանված կարգով:
16. Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակության դիմաց պայմանագրի 13-րդ կետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի պահանջել Բաժանորդից վճարելու և ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

7. ՅՈՐՄ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

17. Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե ի հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվում) դրանցով՝ բնական աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, փոթորիկները, ինչպես նաև սարտաժայիմ գործողությունները, ահաբեկությունները, պատերազմները, ապստամբությունները, հասարակական ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությունը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կամ մասն ձգձգման կամ դադարեցման հակառակ նրանց կողմից գործադրված քերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցություն:

18. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի 17-րդ կետում նշված իրավիճակների մասին հնարավորինս սեղմ ժամկետում, քայքայ ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց վերացման հնարավոր ժամկետները:

19. Ֆորս մաժորի ավարտից հետո Կողմերը պարտավոր են անմիջապես ձեռնարկել միջոցներ իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

8. ԿԵՆԵՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ

20. Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի դիմելու դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

21. Սույն պայմանագրի №2 և №3 հավելվածները տարածվում են 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդների վրա:

22. Սույն պայմանագրի №4 հավելվածը տարածվում է այն Բաժանորդների վրա, որոնց զագասպառման համակարգը տեղակայված է բազմաբնակարան շենքում:

23. Մատակարարը պարտավոր է Բաժանորդին ուղարկվող գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը Բաժանորդին հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ: Բաժանորդի կողմից սույն պայմանագրով նշված ծանուցման վայրին, կամ էլեկտրոնային փոստով, եթե ամկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԳՍՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ փատշաճ հանձնման կոնկրետ ձև:

24. Բաժանորդը պարտավոր է սույն պայմանագրում նշված ծանուցման վայրի փոփոխության դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին գրավոր տեղեկացնել նոր ծանուցման վայրի վերաբերյալ:

25. Այն դեպքում, երբ Բաժանորդը գրավոր չի տեղեկացրել Մատակարարին իր ծանուցման վայրի փոփոխության մասին, և Մատակարարը կիրառել է փաստաթղթերի պատշաճ հանձնման բոլոր ձևերը, սակայն ամկա չէ Բաժանորդի կողմից համապատասխան փաստաթղթեր ստացած լինելու հավաստումը, ապա Մատակարարի կողմից սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված, թեև ուղև և Բաժանորդն այլև այդ գտնվելու կամ բնակության վայրում չի գտնվում:

26. Մատակարարը և 10 000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդը, ելնելով Բաժանորդի զագասպառման համակարգի առանձնահատկություններից, իրավունք ունեն սույն պայմանագրի N3 հավելվածում սահմանել լրացուցիչ պայմաններ:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՇՈՒՄԸ

27. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

28. Մատակարարի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց (որոնք բնական զագը ձեռք են բերում էլեկտրական կամ ցերմային էներգիա արտադրելու նպատակով) միջև կնքված պայմանագրերն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

29. Հանձնաժողովի կողմից բնական զագի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

30. Սույն պայմանագիրը կարող է լուծվել.

- 1) Կողմերի փոխհամաձայնությամբ,
- 2) Բաժանորդի կողմից միակողմանի, այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և օգտագործած բնական զագի, իսկ բազմաբնակարան շենքում գտնվող Բաժանորդի դեպքում՝ նաև տեխնիկական սպասարկման մատուցված ծառայության համար անբողջությամբ վճարելու պայմանով,
- 3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

31. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում սույն պայմանագիրը լուծված է համարվում այն պահից, երբ Մատակարարը պայմանագրի լուծման մասին ծանուցում է Բաժանորդին:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՔԱՄՆԵՆԻ ՄԱՍ ԿԱՅՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

32. Հավելված №1 – Համաձայնագիր սահմանազատման և առաջման կետերի մասին

33. Հավելված №2 – Համաձայնագիր սահմանազատման կետում բնական զագի որակի և ճնշման մասին

34. Հավելված №3 – Համաձայնագիր բնական զագի մատակարարման չափաբանակների և լրացուցիչ պայմանների մասին

35. Հավելված №4 – Համաձայնագիր բազմաբնակարան շենքում գտնվող զագասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման մասին

Մատակարար
Կոնախյան Գ.Գ.
(կնքման կերպով և անվանումը)

Կոնախյան Գ.Գ.
(անունը, ազգանունը և պաշտոնը)
Գ.Գ.Կոնախյան
(ստորագրությունը)

Բաժանորդ
Կոնախյան Գ.Գ.
(անունը, ազգանունը և պաշտոնը)
Գ.Գ.Կոնախյան
(ստորագրությունը)
012427616
(ստորագրությունը)

Քարտեզ 14/3
(գտնվելու վայրը)

Սարգսյան Եր
(գտնվելու վայրը)

55-88-10, 58-03-04
(հեռախոսահամարը)

34-78-83/31-92-79/051-75-52-59
(հեռախոսահամարը)

244010029421000
(բանկի անվանումը և հաշվհամարը)

163023142513 55F
(բանկի անվանումը և հաշվհամարը)

(լեկտրոնային փոստի հասցեն)

(լեկտրոնային փոստի հասցեն՝ առկայության դեպքում)

000463A
(հարկ վճարողի հաշվառման համարը)

01202252
(հարկ վճարողի հաշվառման համարը)



Սարգսյան Եր
(ժամուցման վայրը)

Կ.Տ. (առկայության դեպքում)

Հավելված №1
Բնական զազի մատակարարման
(Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն))
2013 թվականի հունիսի 5-ի N176և որոշմամբ
հաստատված պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սահմանազատման և առաքման կետերի մասին

1. Բնական զազի առաքման կետ է համարվում *Կարթլի կապույտ*
2. Բնական զազի սահմանազատման կետ է համարվում *Չեխովսկայեմ կետ*

Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տվյալները՝

№	Անվանումը	Մակնիշը	Գործարանային №	Տեղադրման վայրը	Տեղադրման ժամանակը
1.	<i>Զեռ</i>	<i>C-10</i>	<i>10000264</i>	<i>[Signature]</i>	
2.	<i>Քարտեզ</i>	<i>PT-100</i>	<i>7870</i>	<i>Սարգսյան Եր</i>	
3.	<i>Զեռ</i>	<i>C-10</i>	<i>10270075</i>	<i>[Signature]</i>	
4.	<i>ԱԿՔ-</i>	<i>C-160</i>	<i>8538</i>		

3. Առևտրային հաշվառքի սարքը (կայանը) հանդիսանում է *բաժանորդ* սեփականությունը:
4. Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, հերթական ստուգաչափման և նորոգման) ծախսերը՝ անկախ դրա պատկանելիությունից, կրում է Մատակարարը: Առևտրային հաշվառքի սարքի (կայանի) արտահերթ ստուգաչափման և նորոգման ծախսերն իրականացվում են ՊՍՕԿ-ով սահմանված կարգով:

Հսկիչ հաշվառքի սարքի (կայանի) տվյալները

№	Անվանումը	Մակնիշը	Գործարանային №	Տեղադրման վայրը	Տեղադրման ժամանակը
1.					
2.					
3.					
4.					

5. Հսկիչ հաշվառքի սարքը (կայանը) սպասարկում է դրա սեփականատերը:

Մատակարար՝

Քարտեզ Գ. Մարտիրոսյան
(անունը, ազգանունը, պաշտոնը)

Բաժանորդ՝

Չեխովսկայեմ
(անունը, ազգանունը, պաշտոնը)

[Signature]
(ստորագրությունը)

[Signature]
(ստորագրությունը)

«*04*» «*08*» 2013 թվական

«*04*» «*08*» 2013 թվական

Կ.Տ. (առկայության դեպքում)

Կ.Տ. (առկայության դեպքում)



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 17/117427-22

**«ՆՈՎԱԼ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Ա. ԴՈՆՈՅԱՆԻՆ**
(Ք. Երևան, Բյուսունյ 6 հասցե)
(Էլ. հասցե՝ noval-llc@outlook.com)

Հարգելի՛ տիկին Դոնոյան,

Ի պատասխան Ձեր 2022 թվականի հոկտեմբերի 18-ի № 09 գրության, հայտնում եմ, որ Երևանի քաղաքապետարանը Ձեր կողմից ներկայացված Աջափնյակ վարչական շրջանի Մազմանյան 6/2 հասցեում նախատեսվող հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2022 թվականի հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած 1-ին հանրային քննարկմանն ապահովել է համայնքի ներկայացուցչի մասնակցությունը:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տալիս ենք նախնական համաձայնություն պայմանով, որ նախնական գնահատման հայտում որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է ներառել.

- > շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման պահանջների նկարագրությունը.
- > հանրային քննարկման ժամանակ բարձրացված հարցադրումները:

Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն աշխատակազմի քննապահպանության վարչություն ներկայացված և համաձայնեցված կանաչապատման նախագծի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

11/3/2022

X

ԳԵՎՈՐԳ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Signed by: NAVASARDYAN GEVORG 2404810219

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ**

Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԿԱՏ.՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հեռ. 011-514-263

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27.10.2022թ.

ք. Երևան, Աջափնյակ համայնք

2022թ. հոկտեմբերի 27-ին ժամը 12.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ: ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով /առաջին փուլ/ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի նստավայրում տեղի ունեցավ «Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ -ի կողմից ներկայացված Աջափնյակ վարչական շրջանի, Մարգարյան 6/2 հասցեում հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման /Բժշկական կենտրոնի մասնաշենքի ընդլայնման և վերակառուցման կցակառույց/» շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները:

Հանրային քննարկումը բացեց Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գայանե Ներսիսյանը, ներկայացրեց հանրային քննարկման նպատակը:

Հանրային քննարկման ընթացքում ելույթ ունեցան.

«Նովալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Թ. Նուրիջանյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման հիմքերը: Նշեց, որ նախագծային փաստաթուղթը համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի ենթակա է փորձաքննության՝ Գ կատեգորիայով, որպես քաղաքաշինության ոլորտին առնչվող նախատեսվող գործունեություն: Ներկայացրեց գնահատման հայտի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացը, փորձաքննական գործընթացի իրականացման շրջանակներում հանրային քննարկման նպատակը, տեսաձայնագրության, մասնակիցների ցանկի և արձանագրության կազմման անհրաժեշտությունը, վերջիններիս օրենսդրական հիմքերը: Նշեց, որ կառուցապատումը կատարվելու է ընկերության սեփական՝ հիվանդանոցի տարածքում, այլ տարածքներ չեն ներգրավվելու:

Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Դավիթ Կարապետյանը և աշխատակիցները հարց բարձրացրեցին նախագծի վերաբերյալ, նշելով որ անհրաժեշտ է մանրամասն ներկայացնել կառուցապատման նկարագրությունը, շինությունների հարկայնության, շինհրապարակի մակերեսի, սարքավորումների տեղակայման, ճանապարհի՝

շին հրապարակ մտնող տեխնիկայի մուտքի և ելքի ուղղությունների, հանվող հողային զանգվածի, հողաբուսաշերտի առկայության վերաբերյալ:

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ փոխտնօրեն Վարուժան Գովհաննիսյանը ներկայացրեց կառուցապատման լուծումները՝ շինությունների մակերեսները, հարկայնությունը: Պատասխանեց բարձրացվող հարցադրումներին: Նշեց, որ գործունեությունն իրականացվելու է արդեն կառուցապատված տարածքում և բնակչության տեղաշարժի համար խոչընդոտներ չեն առաջացնի:

Համայնքապետարանի աշխատակիցները հարց բարձրացրեցին օգտագործվող ճանապարհների պահպանման, տարածքի կանաչապատման, ծառերի հնարավոր հատման վերաբերյալ:

Գ. Ներսիսյանը նշեց, որ Երևանի քաղաքապետարանը հատուկ ուշադրություն է դարձնում կանաչ տարածքների պահպանման խնդրին:

Թ. Նուրիջանյանը նշեց, որ աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում, վնասված կանաչ տարածքների վերականգնում՝ գազոնի տեսքով: Միաժամանակ Ձեռնարկողի հետ ճշտվում է կանաչապատման լուծումները, դրա հետ կապված խնդիրները՝ ծառերի հնարավոր հատման, տեղափոխման, տարածքի կանաչապատման վերաբերյալ: Կանաչապատման և ծառերի հատման դեպքում հայտնում կնախատեսվի համապատասխան միջոցառումներ, կներկայացվի համապատասխան կանաչապատման նախագիծ՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ:

Գ. Ներսիսյանը եզրափակեց հանրային քննարկումը, նշելով, որ 5 աշխատանքային օրվա ընթացքում կներկայացվի գործունեության վերաբերյալ համայնքապետարանի կարծիքը:

Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ Գ. Ներսիսյան



Ձեռնարկող - «ՎԱՊՄԳՅԻ» ՓԲԸ-ի փոխտնօրեն Վ. Գովհաննիսյան



Արձանագրող – «Նովալ» ՍՊԸ-ի մասնագետ Թ. Նուրիջանյան

Մասնակիցների ցանկ

«Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական նստիտուտ» ՓԲԸ -ի կողմից Աջափնյակ վարչական շրջանի, Մարզարյան 6/2 հասցեում հասարակական նշանակության ինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման /Բժշկական կենտրոնի մասնաշենքի ընդլայնման և երակառուցման կցակառույց/ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ անրային քննարկումներ /1-ին քննարկում/։ 27.10.2022թ.

Գ/Գ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Մանուկյան Մարգարիտ	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	011-51-80-29	
2.	Արմենյան Արթուր	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	011-51-80-02	
3.	Սարգսյան Բենամին	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	077-45-02-65	
4.	Սարգսյան Արմեն	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	077-500560	
5.	Գրիգորյան Նուբարե	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	077-22-3212	
6.	Սարգսյան Նարեկ	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	գրիգոր.ներսիսյան@yerevan.am	Մանուկյան
7.	Սարգսյան Նարեկ	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	031223209	Սարգսյան
8.	Սարգսյան Նարեկ	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	093146492	Սարգսյան
9.	Սարգսյան Նարեկ	Սեպտեմբեր 2022 թ. 24-ի քննարկ	091-15-85-15	Սարգսյան
10.				
11.				
12.				
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				

Активация Windows

<p>«Վերարտադրողական առողջության, պերինտալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲԸ-ի՝ Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան 6/2 հասցեում նախատեսվող Հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման /Բժշկական կենտրոնի մասնաշենքի ընդլայնման և վերակառուցման կցակառույց/ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ դիտողությունների պատասխանները</p>				
ՀՀ	Ներկայացված դիտողությունները	Դիտողության պատասխանը	Հիմնավորում	Կարծիք
1.	Իրադրության սխեմայի վրա նշել նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը մոտակա ճանապարհներից, շենք-շինություններից, ենթակառուցվածքներից,	Ներկայացվել է: Էջ 11 գծ 2, Ներկայացվել է նաև կից փաստաթղթերում:	Գծապատկերի վրա նշված են բոլոր հեռավորությունները:	
2.	Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներում կառուցապատված, կառուցապատման ենթակա մակերեսները ներկայացնել զրոյական նիշում, նաև տարածքի մակերեսին տոկոսային հարաբերությամբ,	Ներկայացվել է, էջ 12		
3.	Համաձայն Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի տեղեկատվության և ներկայացված լուսանկարների՝ նշված հասցեում առկա են կանաչապատ և ասֆալտապատ տարածքներ, որոնք սահմանազատված են բետոնե հիմքով և մետաղական ցանկապատով, անհրաժեշտ է տեղեկատվություն նկարագրված տարածքի հնարավոր փոփոխության, ծառահատման, քանդման, քանդման ենթակա	Ավելացվել է էջ 12,	Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, մաքրվելու են միայն չորացած թփերը, ծառերի մնացորդները, ինչը կհամաձայնեցվի Երևանի	Կանաչապատման վերաբերյալ տեղեկատվությունն առկա է հայտի 9,11 բաժնում՝ կանաչապատման մասում, որտեղ նախատեսված են ծառերի պահպանման

	տարածքների/ցանկապատի վերաբերյալ,		քաղաքապետարանի հետ:	ուղղված միջոցառումներ:
4.	Նախագծով նախատեսել կանաչապատում և ներկայացնել կանաչապատման նախագծի էաքիզային սխեման՝ կանաչապատման ենթակա տարածքի մակերեսներով, համապատասխան ծառերի /հատվող, վերատնկվող, նոր տնկվող/ որակական և քանակական կազմով, տարածքի ռոռզման համար նախատեսված լուծումներով՝ համաձայնեցված լինի Երևանի քաղաքապետարանի հետ,	Նոր կանաչապատում չի նախատեսվում, գոյություն ունեցող գազոնը՝ 384 մ ² մակերեսով թարմացվում և նորացվում է, ինչի մասին հայտում նշված է:	Ռոռզումը կատարվում է գոյություն ունեցող ռոռզման համակարգից: Ռոռզման նոր համակարգի կառուցում չի նախատեսվում, քանի որ նոր կանաչապատ տարածքների ավելացում չի նախատեսվում:	Համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքում կանաչապատման վերաբերյալ պահանջ չկա:
5.	Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներում ներկայացված հողամասի ընդհանուր մակերեսը հարկավոր է խմբագրել,	Խմբագրվել և հստակեցվել է: Էջ 12		
6.	Ներկայացնել տեղեկատվություն քանդման ենթակա շինությունների, քանդման ընթացքի և դրանց առնչվող գործողությունների վերաբերյալ,	Ավելացվել է՝ էջ 12, 42, 43		
7.	ամաձայն հայտի նախատեսվում է շին հրապարակում տեղադրել սանհանգույց /բիոզուգարաններ/, հայտում նշված է նաև, որ կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու են տարածքում՝ հիվանդանոցի գոյություն ունեցող զուգարաններից անհրաժեշտ է պարզաբանում և առնչվող նյութերի խմբագրում	Ճշտվել է՝ տեղադրվելու է բիոզուգարան:		
8.	Ներկայացնել համապատասխան փաստաթուղթ, որը կփաստի, որ կաթսայատան հզորությունը կբավարարի նաև կառուցվող տարածքի ջերմամատակարարումը:	Ըստ ձեռնարկողի կողմից տրամադրված տեղեկատվության կաթսայատունը չի աշխատում ամբողջ հզորությամբ, ուստի		Հայտում՝ էջ 17 առկա է տեղեկատվություն կաթսայատան վերաբերյալ «Կաթսայատան հզորության

		<p>ջերմամատակարարման ավելացումը կաթսայատան վերազինում չի պահանջում, հակառակ դեպքում գործընթացը կիրականացվեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>		<p>փոփոխություն չի նախատեսվում, քանի որ կաթսայատան հզորությունը կբավարարի նաև կառուցվող տարածքի ջերմատակարարումն ապահովելու համար, քանի որ ամբողջ հզորությամբ չի աշխատում»:</p>
9.	<p>այտում ներառել գազի, ջրի և կոյուղու տեխնիկական պայմանները՝ տրված համապատասխան մատակարար կազմակերպությունների կողմից</p>	<p>Նշված ծառայությունները իրականացվում են համաձայն պայմանագրերի, որոնք կցված են հայտին:</p>	<p>«ՀԷՑ»ՓԲԸ-ի՝ հավելված 5-ի, էջ 87-ում ներկայացված է սպառման համակարգին ժամանակավոր միացման տեխպայմանը:</p>	<p>Շինարարության փուլում գազ չի օգտագործվելու, իսկ շահագործման փուլում գազամատակարարումը կկատարվի համապատասխան գերատեսչության հետ կնքված գործող պայմանագրերի հիման վրա, անհրաժեշտության դեպքում կկնքվի նոր պայմանագիր: Շահագործման փուլում ջրամատակարարումը կատարվելու է գործող պայմանագրի հիման վրա, անհրաժեշտության</p>

				դեպքում կկնքվի նոր պայմանագիր՝ ջրամատակարարման լրացուցիչ հաշվիչների տեղադրման ժամանակ:
10.	Նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրքի վերաբերյալ ներկայացնել WGS-84 (ARMREF 02) կոորդինատային տվյալներով քարտեզ-սխեմա	Հանութագրման աշխատանքներն իրականացվել են ArmREF 02 կոորդինատային համակարգում (Գեոդեզիական լիցենզիա N 013): Ներկայացվել է կից նյութերում:		
11.	Նախագծով նախատեսվող կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018 թ. N 108-Ն որոշման դրույթներով	Կանաչապատման նախագիծ չի մշակվել, քանի որ գոյություն ունի՝ 384 մ2 մակերեսով գազոն, որը նախատեսվում է թարմացնել և նորացնել, ինչի մասին հայտում և տարածքի գլխավոր հատակագծում նշված է:		ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշումը տարածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի բարեկարգման, վերակառուցման և նոր կառուցվող բնակավայրերի նախագծման

				աշխատանքների վրա: Որոշման պահանջները վերաբերվում է բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին:
12.	3. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը» բաժնում բացակայում է հղումը «Թափոնների մասին» ՀՀ օրենքին /24.11.2004թ./	Ավելացվել է համապատասխան բաժնում:		
13.	ամառային ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. Հոկ 26-ի N 342-Ն հրամանով հաստատված ցանկի, «Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» /ծածկագիրը՝ 31401100 08 99 5/ թափոնատեսակը հանդիսանում է 5-րդ դասի թափոն, ուստի «9.5 Թափոններ բաժնում անհրաժեշտ է հստակեցնել գնահատման հայտի «9.2 Հողային ռեսուրսներ» բաժնում ներկայացված 2100 մ ³ ծավալով հանվող հողային զանգվածի տեղադրման վայրը,	Ավելացվել է 9.5 կետում:		
14.	Անհրաժեշտ է պարզաբանել «Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար անցկացվելու են ժամանակավոր ջրագծեր տարածքում առկա ջրագծերից» արտահայտությունը, ինչպես նաև հստակեցնել ջրցանի համար նախատեսվող ավտոգիստեռով տեխնիկական ջրի բերման աղբյուրը՝ ջրօգտագործման թույլտվության առկայությունը ճշտելու նպատակով	Տարածքում առկա ջրագծեր նշանակում է հիվանդանոցի տարածքում գոյություն ունեցող ջրագծից: Ջրցանը իրականացվում է պայմանագրային հիմունքներով, ինչպես	ՀՀ Ջրային Օրենսգիրք, հոդված 39՝ կազմակերպություն ը, որը ստանում է ջրամատակարարման լիցենզիա, կարող է ջրամատակարարում	Անհրաժեշտ թույլտվությունները ստանալուց հետո՝ մասնագիտացված կազմակերպությունների հետ կնքվելու է պայմանագիր: Պայմանագիրը կարող է կնքվել տարբեր

		և նշված է հայտում:	ան և ջրահեռացման աշխատանքներ կատարել պայմանագրային հիմունքներով:	կազմակերպությունն էրի կամ անձերի հետ, որոնք կարող են ջրառ իրականացնել համաձայն իրենց լիցենզիայի: Ապօրինի ջրօգտագործումը կանխելու համար կան տեսչական հսկողության մարմիններ:
15.	«Կլիմա և օդային ավազան» ենթաբաժնում օգտագործված «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ /Էկոմոնիթորինգ/ անվանումը փոխարինել «Հիդրոթերևութաբանական և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ անվամբ	Կատարվել է փոփոխություն համապատասխան բաժնում:		
16.	Կցել նախագծման թույլտվության, Շինհրապարակի կազմակերպական հատակագիծը /գծապատկեր 2,3/, Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույցը /գծապատկեր 4/ ընթեռնելի տարբերակը լրամշակված հայտում	Կցվում է առանձին ֆայլով՝ Կից նյութեր		
17.	<i>Կադաստրի կոմիտե</i> -առաջարկում ենք 01-001-0206-0045 կադաստրային ծածկագրով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը քարտեզում ճշգրիտ արտացոլելու համար հետագայում ներկայացնել հողամասի ճշտված հատակագիծը՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի	Հանութագրման աշխատանքներն իրականացվել են ArmREF 02 կոորդինատային համակարգում (Գեոդեզիական լիցենզիա N 013):		

	«Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման պահանջների համապատասխան:			
18.	<i>Առողջապահության նախարարություն</i> -առաջարկում եմ պահպանել Առողջապահության նախարարի 2012 թ. սեպ. 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2009թ. ապրիլի 16-ի թիվ 06Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:	Նշված առաջարկության հղումները հայտում առկա են:		
19.	<i>Քաղաքաշինության պետական կոմիտե</i> -Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան N 6/2 հասցեում հասարակական նշանակության շինության և երկհարկանի ավտոկայանատեղիի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն առարկություններ չունի՝ հետագա գործառույթները ՀՀ օրենսդրության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան իրականացնելու պայմանով:	Ենթակա է կատարման ըստ Օրենքով սահմանված ընթացակարգի:		

